ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1431 11.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հուլիս ամսին Դիտորդական խումբը այցելել էր ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Վարդենիսի ՁՊՎ և արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՄԲ
ՄՏԻՄ № 2921
«14» 07 2014թ.

Թերություններ՝

1. Երկրորդ խցի ջրի ծորակը չէր գործում:
2. Երկրորդ խցի սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում: */Անհարժեշտության դեպքում Դիտորդական խումբը կտրամադրի լուսանկար/*
3. Բուժսենյակը գտնվում էր փոշոտ վիճակում:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՄ № 5598
«14» 07 2014թ.

Խախտում՝

Ընդհանուր առմամբ տվյալ ՁՊՎ-ում կալանավորված անձիք ընդունվում են ՁՊՎ ոչ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով, այն է՝ *<< կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրման անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությանը կալանավորների պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածին պահելու վայր՝ մինչև 3 օր տևողությամբ>>:*

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Կալանավորված անձանց տվյալ ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում գրությունները, այն էլ այն դեպքում, երբ շատ անգամ է Դիտորդական խմբի միջնորդությամբ Ձեր կողմից հրահանգավորվել օրենքի կետի պահանջը պահպանելու ուղղությամբ:

Ներկայացնում ենք օրինակներ:

- Ա. Գ-ն երկու անգամ 21.01.2014թ-ին և 11.02.2014թ-ին ՁՊՎ է ընդունվել գրության հիման վրա: */փաստը հաստատող լուսանկար-1,2/*
- Մ.Հ-ն 13.05.2014թ-ին ՁՊՎ է ընդունվել գրության հիման վրա: */ փաստը հաստատող լուսանկար-3/:*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 1878 <<04>> 08 2014թ.

Ձեր 11.07.2014թ. թիվ 2621/1431 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հուլիս ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Վարդենիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որոնց կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Նշված թերությունները արդեն իսկ վերացվել են, իսկ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելու, այն է՝ կալանավորված անձանց առանց համապատասխան մարմինների կողմից կայացված որոշումների ՁՊՎ ընդունելու և պահելու համար ոստիկանության Վարդենիսի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության կապիտան Ա.Սահակյանը ենթարկվել է կարգապահական տույժի:

ՀՀ ոստիկանության շտաբ